Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2024-2025 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

1. Քանի՞ կիլոմետր էր Վան քաղաքից ոչ հեռու կառուցված Ռուսայի ջրանցքի երկարությունը.
   1/ 10 2/ 25 3/ 40 4/ 72
2. Բագրատունի ո՞ր արքայի օրոք է առաջացել Սյունիքի թագավորությունը.
   1/ Սմբատ II 2/ Աբաս 3/ Գագիկ I 4/ Աշոտ III
3. Ե՞րբ է մահացել Տարոնի իշխան Աշոտ Բագրատունին.
   1/ 948 թ. 2/ 966 թ. 3/ 978 թ. 4/ 1001 թ.
4. Ե՞րբ են մոնղոլներն ավերել Գանձակ քաղաքը.
   1/ 1222 թ. 2/ 1231 թ. 3/ 1232 թ. 4/ 1235 թ.
5. Որքա՞ն էր սելջուկ-թյուրքերի բանակի թիվը դեպի Հայաստան երկրորդ արշավանքի ժամանակ.
   1/ 20 հազար 2/ 30 հազար 3/ 70 հազար 4/ 100 հազար
6. Ո՞ր թվականին է պարսից շահը ճանաչել Դավիթ բեկի գլխավորած իշխանությունը Սյունիքում.
   1/ 1722 թ. 2/ 1723 թ. 3/ 1724 թ. 4/ 1727 թ.
7. Ո՞ր շրջանում է իր կատարած գործունեությամբ աչքի ընկել Թորոս Ծառուկյանը.
   1/ Սեբաստիա 2/ Կարին 3/ Մալաթիա 4/ Կեսարիա
8. Ե՞րբ է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը.
   1/ 1709 թ. 2/ 1734 թ. 3/ 1735 թ. 4/ 1736 թ.
9. Ե՞րբ է տեղի ունեցել Սուասոնի ճակատամարտը.
   1/ 451 թ. 2/ 486 թ. 3/ 496 թ. 4/ 751 թ.
10. Ֆրանսիական ո՞ր արքան է մինչ գահ բարձրանալը եղել հուգենոտների առաջնորդ, սակայն թագավոր դառնալիս ընդունել է կաթոլիկություն և 4 տարի անց այն հռչակել պետական կրոն.
    1/ Ֆիլիպ II 2/ Կարլոս V 3/ Լյուդովիկոս IX 4/ Հենրիխ IV
11. Ո՞վ է «Արևի քաղաքը» ստեղծագործության հեղինակը.
    1/ Թոմաս Մոր 2/ Կամպանելա 3/ Սերվանտես 4/ Էրազմ Ռոտերդամցի
12. Նշված աշխարհագրական օբյեկտներից որի՞ հայտնագործումը կապված չէ պորտուգալացիների հետ.
    1/ Ազորյան կղզիներ 2/ Կանարյան կղզիներ 3/ Տենոչտիտլան 4/ Բարեհուսո հրվանդան
13. Նշվածներից ո՞վ է մասնակցել աշխարհում առաջին հանրագիտարանի խմբագրմանը.
    1/ Ի. Կանտ 2/ Ի. Նյուտոն 3/ Դ. Դիդրո 4/ Ժ. Ֆուրյե
14. Ընտրե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը:
    ա/ Գյուտի՝ կաթողիկոս դառնալը
    բ/ Խաղխաղի ճակատամարտը
    գ/ Նվարսակի հաշտության պայմանագիրը
    դ/ Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսի նահատակությունը
    ե/ Վարդանանց պատերազմի՝ ողջ մնացած աքսորյալ մասնակիցների վերադարձը հայրենիք
    զ/ Դենշապուհի աշխարհագրի անցկացումը

    1/ բ, դ, զ, ա, ե, գ 2/ բ, զ, դ, ա, ե, գ 3/ զ, բ, ա, ե, դ, գ 4/ զ, բ, դ, ա, ե, գ
15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Արաբո	ա/ Սարգիս Մեհրաբյան
2. Սեպուհ	բ/ Առաքել Մխիթարյան
3. Վարդան	գ/ Կարապետ Թուր-Սարգսյան
4. Իշխան	դ/ Արմենակ Ղազարյան
5. Հրայր	ե/ Արշակ Ներսիսյան
6. Գարուն Աղասի	զ/ Հովսեփ Արղության

    1/ 1-ե, 2-բ, 3-ա, 4-զ, 5-դ, 6-գ 2/ 1-բ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ, 6-գ
    3/ 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-գ, 6-դ 4/ 1-ե, 2-բ, 3-զ, 4-ա, 5-դ, 6-գ
16. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:
    1/ Դավիթ Անհողինն ընդարձակել է իր թագավորության սահմաններն ի հաշիվ Գանձակի և Տփղիսի ամիրայությունների:
    2/ Տարոնի զավթումից հետո Բյուզանդիան գրավել է Մանազկերտը:
    3/ Յուսուֆը Սյունյաց Սմբատ թագավորից պահանջել է, որ նա Նախճավանի Երնջակ բերդի պաշտպաններին զենքը վայր դնելու հրաման տա:

4/ Անանիա Մոկացի կաթողիկոսը 948 թ. կաթողիկոսական աթոռն Աղթամար կղզուց տեղափոխել է Կարինից հյուսիս գտնվող Արգինայի վանք:
5/ Գագիկ Ի-ն իր թագավորությանը միավորել է Արցախի մեծ մասը, այդ թվում՝ Վայոց ձորը և Ծաղկոտնը:
6/ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բագրատունյաց Հայաստանի վերջին սպարապետն էր:

17. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները:

1/ Ք. ա. Ի հազարամյակում Հնդկաստանում ձևավորվում է այբբենական գիր՝ բրահմին, որ հետագայում կատարելագործվում է արամեերենի ազդեցությամբ և բավականին լայն կիրառություն ստանում:
2/ Կիլիկյան Հայաստանի բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը կոչվում էր սպասալար:
3/ Միլեթյան փիլիսոփայական դպրոցում կյանքի նախասկիզբ համարում էին ջուրը և օդը, որոնց միասին անվանում էին ապեյրոն:
4/ Հին Հնդկաստանում աշտարակաձև կոթողային դամբարաններն անվանում էին զիկկուրատներ:
5/ Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների օրոք Հայր մարդպետի գլխավորած գործակալությունն իրականացնում էր արքունի կալվածքների և գանձարանի հսկողությունը, Արշակունյաց շառավիղների դաստիարակությունը:
6/ Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների օրոք մաղխազությունը տնօրինում էր հարկային-տնտեսական գործը:

18. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Պատանի հասակում Տիգրան Երվանդյանը Դարեհ Ի-ի որսընկերն է եղել:
2/ Արտավազդ II-ը 13 հազար զորք է տրամադրել Անտոնիոսին՝ պարթևների դեմ արշավանքին մասնակցելու համար:
3/ Տրդատ III-ը կառուցել է Գառնիի հեթանոսական տաճարը և ամրոցը:
4/ Արտաշես Ի-ը երկարատև պայքարի արդյունքում Սելևկյաններից ազատագրել է Տմորիքը:
5/ Հռանդեայի պայմանագրով նախատեսված էր, որ Տրդատ Ի-ն անձամբ Ներոն կայսրից Հռոմում պետք է ստանա Մեծ Հայքի թագավորության թագը:
6/ Սանատրուկ արքան կառուցել է Մծուրք քաղաքը Մշո դաշտում:
7/ Տիր աստծու պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Երազամույն կոչվող վայրում:

19. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ Ապլղարիպ Արծրունուն են պատկանել Ադանա, Մսիս, Տարսոն, Լամբրոն և Հռոմկլա քաղաքները:
2/ 11-րդ դ. երկրորդ կեսին հայերը մեծամասնություն էին կազմում, Եփրատ գետից արևմուտք գտնվող շրջաններից բացի, նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք շրջաններում:
3/ Դաշտային Կիլիկիայի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է մոտ 150-200 մ և աշխարհի արգավանդ դաշտավայրերից մեկն է:
4/ Գագիկ Աբասյանն իր թագավորության դիմաց Բյուզանդիայից ստացել է Արևելյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը:
5/ Ռուբեն իշխանն իր իշխանությունը հիմնել է՝ սելջուկների դեմ ապստամբելով և Կոռոմոզոլ բերդում ամրանալով:
6/ 1197 թ. խաչակիրների երկու բանակ ձեռնամուխ է եղել Դաշտային Կիլիկիայի գրավմանը, և քանի որ Կոստանդին Ի-ը վերահսկում էր Տավրոսի լեռնանցքները, խաչակիրներն ստիպված էին համագործակցել նրա հետ:
7/ Լևոն Մեծագործի հրամանով Սմբատ Գունդստաբլը կաթողիկոսի և Ատան պայլի հետ նշանակվել է մանկահասակ Զաբել թագուհու խնամակալ:
8/ Գող Վասիլը, համագործակցելով Մլեհի հետ, կարողացել է ազատագրել սելջուկներից Սիսը և փոխանցել համահայկական կարիքների համար:
9/ Հռոմկլան Թորոս II-ի օրոք դարձել է կաթողիկոսական նստավայր և այդ կարգավիճակը պահպանել մինչև Եգիպտոսի մամլուքների կողմից նվաճումը 1292 թ.:

20. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Վանի թագավորության միասնական դիցարանն ստեղծվել է Իշպուինիի կրոնական բարեփոխումների արդյունքում:

2/ Հայասայի Կարանի արքան, դաշինք ստորագրելով Խեթական թագավորության հետ, ամուսնացել է նրանց արքայի քրոջ հետ:
3/ Երասխ գետի արևելյան բազուկն սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, միախառնվում Կուր գետին և թափվում Կասպից ծով:
4/ Հայերի ծագման հունական ավանդազրույցի համաձայն՝ հայերի նախնին Թորգամոսն է, որից սերել են իր որդիներ Հայոսը, Արմենոսը, Քարթլոսը և կովկասյան ժողովուրդների նախնիները:
5/ Վանի թագավորության գերիշխանության սահմանները Արգիշտի Ի-ի օրոք ընդգրկում էին Փոքր Ասիայի արևելյան պետությունները, մերձուրմյան ավազանի մի քանի երկրներ և Բաբելոնիան:
6/ Ռուսա Ի-ի օրոք Վանի թագավորության բանակում առանձնացվել է «արքայական գունդը» (հեծյալ զորամիավորումներից բաղկացած ընտրյալ ուժեր), ձևավորվեցին «մարզային զորքերը»:
7/ Տիգրան Մեծը Զելայի ճակատամարտում վերջնականապես ջախջախել է Լուկուլլոսին, ինչից հետո վերջինս պաշտոնանկ է արվել, և Արևելք է ուղարկվել Պոմպեոսը:
8/ Տիգրանակերտ մայրաքաղաքի բնակչության թվաքանակը 120 հազար էր:
9/ Տիգրան Մեծի բանակի կազմում բուն հայկական զորքը 120 հազար էր:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

14.01.2025 թ.